ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«21» նոյեմբերի 2012թ. N 308

Ք.Արմավիր

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի «բ» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության քաղաքացիների ընդունելության, առաջարկությունների, դիմումների և բողոքների բաժնի վարիչի 2012 թվականի նոյեմբերի 2-ի հ20-121-08 գրությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան ուղարկված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի Գայի փողոցի N32 տան բնակիչ Հռիփսիկ Հարությունյանի Հայաստանի Հանրապետության Նախագահին ուղղված դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Վաղարշապատի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության պետի 2012 թվականի նոյեմբերի 9-ի N359 գրությունը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով Հռիփսիկ Հարությունյանին հատկացնել 30000 /երեսուն հազար/ դրամ միանվագ օգնություն:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին /Փ. Կարապետյան/ սահմանված կարգով իրականացնել գումարի վճարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ